ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 247-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ք. Ճամբարակի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել Գագիկ Մելքումյանին սեփականության իրավունքով պատկանող Ճամբարակ համայնքի ք.Ճամբարակ Հ.Նադարյանի փող., թիվ 2/1 հասցեում 05-002-0084-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի տեղադիրքը և 0.10702 հա հողամասի գործառնական նշանակությունը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ք.Ճամբարակ Հ.Նադարյանի փող, թիվ 2/1 հասցեում գտնվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողատարածքի տեղադիրքի փոփոխությունը ճանաչել օրինական:
2. Բնակավայրի 0.10702 հա այլ հողատեսքի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրի բնակելի կառուցապատման:
3. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ղեկավարի 30.10.2024թ. տրված 1298-Ա որոշումը:
4. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

2025 թ. ապրիլի 18
ք.Ճամբարակ